

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1897 թվականի
Պոլիարիոյ համար տարեկան 10 ֆրանկ
» » վեցամսեայ 5 »
Արտատպանի » տարեկան 12 »
» » վեցամսեայ 6 »
ԿԱՆԿԻՆ ԿԱՐԵՒԻ

Նամակ դրամ եռյակ դրկեղ հետեւեալ հասցեով
ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԱՐՈՒՄԸ ԼՐԱԳՐՈՅ ԿԱՐԵՒԱ (ՊՈԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խնայարարական ուղղեալ գրութիւնք
էս յին դրկուր եւ յարեալ դասուած-
ները միայն կը հրատարակուին անբող-
քովին կամ մասամբ:
Ծանուցման տողը 20 սանթիմ. երե-
քէն անդի անգամներու համար 20 օ/օ
գեղջ կը լինի:

1898

Նոր տարին սեմին վրայ ոտք
կոխելու պահուն մարդ գրէթէ
բնագրամը կը թելագործի յետա-
դարձ պինդ մը նետելու աւար-
տած տարին եւ անոր արտագրած
բարեկամ ու ձախողք գէպերուն
վրայ: ասոր բուն շարժառիթն է
չահու եւ փնտրի հաշուեկշիռ մը
յօրինել: Ըլլայ նիւթական թէ
բարոյական տեսակետով եւ քննար-
կողութեամբ արգիւնքը տեսնել: Այս-
պէս է ինչպէս անհատներու, նոյն-
պէս ազգերու համար:

1897 թ. վրայ ակնարկ մը մեզ
կը յիշեցնէ թէ այդ տարեշրջանը
հաշուեկշիռ համար կարեւոր գէպ-
քերու շարք մը չի ծնաւ: Նախըն-
թաց երկու տարիներու գէպքե-
րուն հետեւողները կրեցինք ա-
ւելի եւ անոնց նուիրուած էր հան-
րային ուղղորդութիւնը:

Կ. Պոլսոյ մէջ դաշնակցական
վերջին ուժարկութիւնը եւ թուրքե-
պարսիկ սահմանագլխի շարժում-
ները որոնք նախընթաց տարիներ-
ու եղիլութեանց հետ բաղդատե-
լով աննշան եղան իրենց հետե-
ւանքներու մասին, նոյնպէս թու-
գաւի կոտորածը որուն հարիւր
երեսունի մօտ հայեր զոհ ինկան,
վայրկենապէս միայն վրադիցնելէ
ետքը միտքերը՝ մոռցուցան չու-
տով եւ անոնց տեղը վերստին գրա-
ւեց հայ որբերը պատասպանելու եւ
աշխարհի չորս կողմը ցրուած
գաղթական, ինչպէս եւ իրենց
բնավայրին մէջ մերկ ու անթի
մնացած աղքատ հայերը հոգալու
խնդիրը:

Կ. Պոլսոյ Պատրիարքարանը,
որուն պետին հաշտարար ու մեղմ
քաղաքականութիւնը հանգէպ
Դրան՝ գաղափարաւորուած մնաց
միեւնոյն ամբողջութեան, չյաջողե-
ցաւ գոնէ որբերուն եւ աղքատնե-
րուն օգնութեան հասնելու մասին
նշանաւոր գործ մը կատարել:
Սրբազան Օրմանեան մինչեւ այսօր
կը շարունակէ տակաւին խնդրել
Սուլթանէն որ բաւականաչափ
նիւթական նպաստներ չնորհէ հա-

յաստանի կարօտեալներուն եւ չինէ
քանդուած հայ դպրոցներն ու ե.
կեղեցիները:

Արդար է այստեղ յիշատակել
թէ Թուրքիոյ մէջ մասնաւոր բա-
րեկեցիկ ազգայիններ եւ եւրոպա-
կան զանազան երկիրներու փոք-
րաթիւ հին հայ գաղթականութեան
թիւները չի զլացան իրենց կարո-
ղութեան սահմանին մէջ ձեռք
կարկառել թշուառութեան մատ-
նուած իրենց ազգակիցներուն:

Թուրքիոյ երախտագիտութեամբ
հարկ է մանաւանդ արձանագրել
այն մարդասիրական նշանաւոր օգ-
նութիւնները զորս Եւրոպայէն
ընդունեցին եւ տակաւին կընդու-
նին հայ որբերն ու աղքատները
Հայաստանի եւ օտար երկիրներու
մէջ: Այս նպատակներուն բաշխու-
մին եւ որբերու պատասպանման մէջ
որոնք ընդհանրապէս միասնաբերե-
րու յանձնուած են, տեղ տեղ
տեսնուեցան հայ ժողովրդի թըշ-
ուառութեան օգտուելու միտում-
ներ՝ անոր մէջ օտար կրօններու
բուրականտան ընկու համար,
Այս պարագան՝ որքան ալ ինք-
նին ցաւալի, պէտք չէ որ մեզ
մոռցնել տայ թէ անթիւ աղքատ-
ներ եւ որբեր թշուառութեան ճի-
րաններէն աղքատեցան Եւրոպացի-
ներու մարդասիրութեան շնորհիւ:

Մեր ուսումնայ եղբայրներն ալ
անկարելի չի գտնուեցան հան-
գէպ իրենց այն ազգակիցներուն,
որոնք իրենց տունը եւ տեղը ձե-
րած Թուրքիայէն անցան թափե-
ցան Ռուսիոյ սահմաններէն ներս:
Հայ կրօնական իշխանութիւնը եւ
հայ անհատներ ըրին ինչ որ կա-
րելի էր: Չարը հաճեցաւ արտօ-
նել որ պաշտօնական չըմանակնե-
րու հսկողութեան ներքեւ հանգա-
նակութիւն մը բացուի եւ արգիւն-
քը բաշխուի աղքատ հայ գաղ-
թականներու: Հայ եւ ռուս նշա-
նաւոր գրագէտները ու արուես-
տագէտներ միացան՝ իր տեսակին
մէջ մէկ հատիկ, սրանչելի երկ մը
յօրինելու, որոյ վաճառումէն գո-
յացած արգիւնքը յատկացած է
ամբողջութեամբ հայ գաղթականութեան
անորակելի դառնութիւնները:
Պաշտօնաւոր Բոլոյժ Եղիշայրախան

Օգնորդին իբր մտային գեղեցիկ
արտագրութիւն եւ իբր մարդասի-
րական զգացումներու յիշատակա-
րան անմոռաց մնալու արժանի երկ
մըն է:

Քաղաքական գէպերու կար-
գին մէջ միայն թուրքեւրոյն պա-
տերազմն էր որով հայ ժողովուրդ
չահագորգուեցաւ սիրտով եւ հո-
գիով: Պատերազմին ելքը Յու-
նաստանի համար այնքան աղե-
ատի, Թուրքիոյ բոլոր բրիտան-
եայ ազգաբնակչութեանց համար
ալ զգալի փնտս մը եղաւ թրքա-
կան բռնապետութեան դիրքը զօ-
րացնելով:

Այս հակիրճ տեսութեամբ վեր-
ջացած տարին իրեն համեմատա-
բար փոքր կորուստներով եւ փնտ-
սներով քիչ շատ միտքարական ե-
լքով մը հետք մը բացառու-
թեան դրուի իր երկու ահաւի
նախորդներուն հետ, ուր մեր բը-
նանքը մը սկսած ու յառաջացած
էր կատաղութար:

Հայկական արեան հեղեղը, որ
կըսպառնար ողողել աշէն ինչ որ
հայու անունը կը կրէ, դադրեցաւ:
Քաղաքական անգործութիւն մը,
առեւտրական շարժում վերանորո-
գումը եւ տեղ տեղ արտակարգ
անյուսալի յաջողութիւնը միեւ-
պէս նպաստեց թրքահայութեան
քիչ շատ շունչ առնելու:

Բարեբաղդաբար հանգամանք-
ները կը ներհն մեզ յուսով որ
այս վիճակը շարունակէ ու աւե-
լի շիշտուի առաջիկայ տարին
մէջ, որ կոչուած է, — եթէ անու-
կնկալ, մարդկային հաշիւները
խանգարող գէպքեր չծագին, — մեր
ազգային ցաւերը մասամբ թե-
թեւցնելու եւ զօրացնելու հայու-
թեան մարմնոյն վրայ բացուած
խոր վէրքին սպեղանին:

Այս յուսով ի սրտէ մեր ընթեր-
ցողներուն կը շնորհաւորենք նոր
տարին եւ կը մաղթենք մեր սի-
րական ազգին յաջողագոյն եւ մը-
լիթարական օրերու շարք մը
1898 տարւոյ ընթացքին մէջ:

ԹՈՒՐԻՔ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

F.

Հայերս միշտ սիրած ենք ինք-
զինքնիս գովաբանել. մանաւանդ
վերջին տարիներ այնքան առաջ
գացինք մեր բարոյական յատկու-
թիւնները գրչով ու խօսքով գըր-
ւատելու սովորութեան մէջ որ
մէկ կողմէն մոռցանք թէ Թուրքը
որքան ալ բարոյապէս մեղմ գտ-
րին՝ ունի իբր ազգութիւն իբր
բարոյական ուժերը՝ գլխաւորապէս
իր իսլամական խորամտութեամբ
զուրկեցնելու բիւծ, իսկ միւս կող-
մէ անտես ըրինք մեր բարքերու
այն յոռի կողմերը որոնք յարմար
էին մեր ազգային գեղեցիկ բարե-
մասնութեանց մէկ խոշոր մասը
չէզոքացնելու:

Առանց չափազանցութեան եր-
կիւղի կրնանք ըսել թէ Թուրքը
իր տիրապետութիւնը քրիստոնեայ
երկիրներու վրայ որքան իր գի-
նուորական զօրութեան՝ այնքան
ալ իր կրօնական սա հաւատքին
կը պարտի, թէ իր ամէն տեսակ
մեղքերը քաւուած եւ հոգիներով
լեցուն ձեւերի գոնքերը բացուած
են իր առջեւ այն վայրկեանի երբ
իսլամութեան համար հալածէ կամ
հալածուի, անմիջեւ կամ տանջուի,
մեռնէ կամ մեռնի:

Բարոյական ահագին ուժ մըն է
զոր կը ներշնչէ այս հաւատքը եւ
որ կատակ չի վերցնել: Անոր նշա-
նակութիւնը աւելի կը մեծնայ,
երբ նկատենք որ քրիստոնեան եւ
մասնաւորապէս հայ քրիստոնեան
համոզուած է որ շարժառեւելով ու
նահատակուելով պիտի արժանա-
նայ երկնային կեանքին, մինչդեռ
իսլամին համար, ինչպէս ըսինք,
միեւնոյն արգիւնքն ունի նաեւ
հալածելն ու մեռնելը:

Այս՝ գլխաւորն է այն բարոյա-
կան ուժերուն, որոնք Թուրքե-
րուն քով ալ կը գտնուին, կամ
գտնուած են երբեմն, թէեւ շատ
սակաւաթիւ ըլլան մեր ազգային
բարոյական ուժերու հետ բաղդատ-
մամբ:

Չգուշանալու ենք ուրեմն Թուր-
քը գնահատելու ժամանակ զայն

բարոյապէս բոլորովին արհամարհելի քանակութիւն մը նկատելէ։ Սխալ մը պիտի ըլլար այս և ճիշդ այն պատճառով չափաւոր սարքեր սխալ մը որ թոյլ տուի մեր ամէնէն սխալին թշնամին՝ պարտինք ջանալ ամէն կերպով լաւ ճաննալու։

Եթէ մեր բարոյց մէջ սպրդած և հիմ քանած չըլլային ապակաւնիչ ու քանգիչ թերութիւններ, ու եթէ անոնց սարսափելի հետեւանքները արեւու պէս պայծառ չկենային երեւան, եթէ մինչև իսկ մեր յեղափոխական երիտասարդութեան շարժումներուն մէջ, որոնք հայութեան համար մահի և կեանքի խնդիր մըն էին պարզապէս, մեր տոհմային սքանչելի յատկանիշներուն հետ չխառնուէին մեր հոնրային նկարագրին յաւատ ողբալի արգիւնքները, ներքին պիտի ըլլար մեզ մեր բարոյական բարձրութենէն զուտ արհամարհական հայեացք մը միայն նետել թուրք տարրին վրայ, որ իր բազմադարեան ազատ գոյութեան, նիւթապէս բարդաւած կեանքին մէջ, գուցէ բացի քանի մը բանաստեղծներէ՝ ոչինչ նշանաւոր կրցեր է արտադրել զիտական, արուեստական և գրական տեսակէտով։

Դժբաղդաբար—սրովհետեւ այս իրօք զժողովրդութիւն մըն է մեզ համար— թուրքին յիշեալ անքնդունակութեանց և անոնցմէ հետեւող տկարութեանց պակասը մասամբ կը լեցնեն իր մէկ քանի յատկութիւններ. նախ իր իսլամական անհուն հաւատքը, զոր արդէն յիշեցինք, ապա՝ այն կարգապահութիւնը կամ կոյր հնազանդութիւնը, որուն կը հետեւի ամէն պարագայի մէջ իրեն կրօնական—քաղաքական իշխանութեան հանդէպ։ Ասկէ արդէն ինքնին կը հետեւի սրիշ առաքինութիւն մը, համեմատութիւն կամ որ նոյն է ընդունակութիւն հանրային ձեռնարկներու և հաւաքական գործունէութեան մէջ յաջողելու, բաւ է որ նախաձեռնութիւնը, թեղադրութիւնը վերէն գայ, Շէքիի հրամաններուն համաձայն շարժող իշխանութեանէն բխի։

ԱՄԱՆՈՐԻ ՊԱՐԻԿԸ

16^ր էջերէ բաղկացած փոքրիկ տետրակ մը, ստոնքախառն ու ամպոտ տողերով, որ կուգայ մեզ ողջունելու 37 ի գողգոթուն օրհասական ընկերներուն վրայ։ Եւ որ չափ մնածել կուտայ։

Մայր եկեղեցիի մը գմբեթի մօտ քառաթիւ խաչին կրթնած է ուրուական մը, կարծես Ամանորի գիշերային պարիկ մը։ Յոգնած է երկար ու տափանկի ճամբորդութենէ մը։ Սրբան տեղերէ

անցած, ինչ խեղդատու յիշատակներ ունի թեւերուն վրայ։ Իր վերջին կայքի ժամուն, աչքին առջեւ ունի Ծրերունի մը, որ, կարկամ բազուկներով ու լերկ գանկով, սրտածմիկ տնտարանի մը վրայ, կը մոռցնէ շատ բան, գուցէ ամէն բան։ Այս, այդ Ծրերունին... թառամ շրթանքներէն «ուռնաք» մը դուրս կելլէ, ահաւոր ըզձանքի ազդակ մը։

Կողմնորդի գիշերները, մեր տնական հաւատքին նայելով, Ամանորի անգրանիկ ժամերուն հետ Պարիկը մը կիշնէ հայ տունները, և ան է որ ուխտեր կատարած է դարերով, մոնտանգ կուսական խնդրաւորներ, որոնք բարձրաւոր խոնկին պէս մաքուր են և ճառագայթի մը պէս անապական։ Այդ ոգին, կաղանկայէք տեսարանին մէջ, կուսան մը, աստուածային գեղով օժտուած գրգռուել նկար մը, որ կը փողփողի լուսեղէն շրջանակի մը մէջ։ Ամանորի գիշերուն այն Պարիկը կանձաւորէ մեր հին ու նոր հաւատքի սրբանուէր ոգին, որ, Անահիտի մահանէն ու Աստուածամօր տաճարէն հտքը, վարձատրուած է երկնքի մէջ, և պստոն ունի ամէն տարի, Ամանորի առջի գիշերը երկնքէն երկիր իջնել ու կողանդէք տալ իր ընտրած անձին։ Իսկ խաչը, որու կը կրթին՝ մեր հոգիին բարոյական գրութեան խորհրդապատկերն է՝ ամպերուն ու փոթորիկին տակ, ծովուն ահաւոր ծփանքէն վեր, որ միշտ սպառնալից գոռացած է։

Այս տարի, մեր խեղճ Պարիկը, քսմանիլ վայրերէ, գալուստ շարժարանքներէ անցած, վառնայի մէջ կը նետուի շնչապառ տապալուած սիրտերու տապախառն գողորշին ժողովուր։ Եւ այդ տեղ, «հիւանդանոցի շրջապատէն դուրս, երկու փոքրիկ պատիւրու անկիւնին տակ, մարդկային էակ մը տեսաւ, որ տախտակի կտորի մը վրայ ամփոփուած է»։ Այլ երեւակայեցք ծերունին, աւելցուցք անոր վրայ ինչ կսկծալի գիծեր որ կուլէք. — կծկուած, գողգոթուն, դանդաղուն, ինքն իր մէջ ծրարուած կրիայի մը պէս. կարկամ բազուկներ, չարչրուած սրբունքներ, մէկ խօսքով թշուառութեան վիթխարի պատկեր մը, որուն վրայ սուր ճանկերով իր հետքը թողած է կեանքի ամէն վայրկեանը։ Այդ ծերունին կը պատկերէ մեր կեանքին մէջ հին ազգութիւն մը, դարերու մէջ ծնածուած ու գողգոթուն, որ պատմական սարսափելի փոթորիկներու տակ խոշտանգուած, ջախջախուած, գիտես թէ իրաւ մէկ փրկութիւն ունի... մեռնել... Եւ ահա Ծրերունին «ոտքերուն մասններուն վրայ բարձրացած, ձեռքերը երկնցուցած Պարիկին, լերկ գանկին վրայ ցանցաւ մա-

կերը փուշի պէս տնկուած, բերանն ու աչքերը լայնեկ բացած, և բուռն շարժումէն վրայի դրգեկները ծուկի ծուկի վար թափած, կը շարունակէ ոռնալ։

— Մահ, մահ, ես մեռնել կուզեմ։

Այդ աղաղակին առջեւ, աստուածեղէն ոգին կը տատանի քսմանափուշ, խաչն է որ կերերայ Մայր տաճարին գմբեթին մօտ, մեր հոգեկան բոլոր ուժերու սըրբութիւնը, որ, պոռնկացած մարդկութեան աղտոլի փրկարներուն մէջ, կը ցնցուի նաւու մը պէս, որուն վրայ ռուսի կիշնէ իր բոլոր ուժովը։ Պարիկը այս անգամ ճմուռած, ճնշուած, ճգնափուռ իր աստուածային էութեանը մէջ, վերջին շունչը կանչէ Գերագործին առջեւ, ուր ծուկի եկած՝ մահ կը պաղտորի այդ հինաւուրց ծերունին, ու ինքն ալ, իբրեւ պարգեւ, մահ կը պաղտորի իրեն համար, անմահութեան մէջ անէութիւն։

Բայց ինչպէ՞ս. հնարաւոր բան է տալ Անմահութիւնն անէութեան հակասականն է։ Թէեւ ձեռքերդ կերկնցնես անոր պաղատսկին, բազուկներդ կը տարածես, շրթանքներդ կը տատանին, հնար չկայ սակայն, և սակամայ պիտի ըմբռնես որ ոգին չի մեռնիր, ու, պահ մը ետքը, նորէն ինքզինքդ գտածի պէս, կը կրթնիս խաչի թեւերուն, որ ազգերու իտէականը կը պատկերէ կեանքի անհուն տեսողութեանը մէջ։ Չար չարանքները պիտի դան, ամպերը պիտի կուտակուին մեր գլխուն վերեւ, ծովը ժայռերուն տակ պիտի փրփրի ոռնալով, յուսահատութեան ժամը ծերունին պիտի պատկերին, և սակայն նոր սերունդներու յաջորդական ուժը, թէեւ շատ անգամ երերուն, այլ խաչին կրթնած ուժ պիտի դա՛ն իր մէջ և իր կռնակը պիտի դնէ բարոյական հաստարանի մը։ Մահ, դուն սրչափ ալ զարնա առջեւէն, նոր կեանքեր, նոր ուժեր պիտի ելլեն ետեւէդ. անէութեան դէմ կեցած է ազգերու անմահութիւնը։

Ու սակայն Ծրերունին «ուռնաք»ը, գիշերուն միթիւն ժամերուն, կոլորտաւոր բոլորտիքս հովի ուժգին պոստիւններով, և բնութեան ու մարդկութեան ամէն որոտացող ձայններուն մէջ ինքն է որ կը թագաւորէ, սարսափ ու սարսափեցնող։

Վառնէ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Աղիսանսրիս, 24 Դեկտ.

Տեղւոյս Աղբատախնամի վարչութիւնը վերականգնելու համար թաղ. խորհուրդը ընդհանուր ժողով մը կազմեց առաջնորդարանի

սրահին մէջ. հրաւիրուած էին անխտիր բոլոր ազգայինները, սա. կախ միայն 32 անձեր ներկայ գտնուեցան ժողովին։

Ներկաներէն մէկ քանին փափաքեցան իմանալ Աղբատախնամի վարիչ անդամներուն հեռանալուն պատճառը։ Նախագահը պատասխանեց թէ այդ խնդիրը ինքնին կարեւորութիւն չունի, քանի որ հրաժարեալ վարչութիւնը իր գոյութեան երկամիայ տեսողութեան ժամանակ ոչ մէկ գործունէութիւն ցոյց տուած էր։ Իր անդամները մէկիկ մէկիկ հրաժարած ըլլալով, պէտք է վայն բնականաբար լուծուած համարիլ։

Սակայն իրողութիւնը սա է որ թաղ. խորհուրդը ինք նախաձեռնարկ ըլլալով հիմնեց իշխաւ բարեգործական ընկերութիւնը, զոր աղայական նկատումներով ջանաց միշտ իր ազգեցեղութեան ներքեւ պահել, առանց ունոր նեցուկ ըլլալու։ Այսպէս թաղ. խորհուրդը զերծ չէ պատասխանատուութենէ այն ողբալի վիճակի մասին ուր եկաւ հասաւ Աղբատախնամը։

Նախագահը վիճաբանութենէ ետքը հասկնալով ընդհ. ժողովին տրամադրութիւնները, առաջարկեց վերաքննութեան ենթարկել աղբատախնամին կանոնադիրը և կազմական ձեւը։ Առաջարկը ընդունուեցաւ և կազմուեցաւ հինգ անդամէ բաղկացեալ յանձնաժողով մը որուն պաշտօնը պիտի ըլլայ բարեփոխել կանոնադիրը և զայն ներկայացնել ընդհ. ժողովին, տեղեկանալ նախկին վարչութեան ընթացքին ու գործունէութեան և բերել իր տեղեկագիրը և ապա ձեռնարկել նոր վարչութեան մը ընտրութեան։

Յուսալի է որ մասնաժողովին անդամները չպիտի մոռնան թէ աղբատները չեն կրնար երկար ժամանակ սպասել նոր աղբատախնամին նպատակներուն որոնցմով միայն ամէնէն տառապեալներուն վիճակին դառնութիւնը կրնայ բիշ մը մեղմանալ։ Մասնաժողովը թող փութայ ուրեմն արագ գործելու որքան կարելի է։

Թաղ. խորհուրդը մը որ երեք տարի միայն պարտ էր պաշտօնաւարել, հինգ տարիէ իվեր ազգ. գործերու զեկը կը վարէ առանց ժողովրդին հաշիւ տալու և տեղի տալով կարգ մը դժգոհութեանց ու բողոքներու գլուխ չիկայ։ Այս ընդացքը պատուաբեր չէ ոչ միայն թաղ. խորհուրդին այլ և հայ ժողովուրդին համար։ Ցաւալին այն է որ այն տարրական ճշմարտութիւնը չենք ըմբռնած և տակաւին չենք հասկցած թէ օրինաւորութիւնը և կարգապահութիւնը անհրաժեշտ պայմաններ են ամէն հանրային գործունէութեան։

...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Հայ թրիակյալն որ ժրնակի թերթը կը հրատարակէ գերմանացի հովիւ Տ. Ֆիշլըրի մէկ հրապարակախօսութիւնը Հայաստանի արդի վիճակին վրայ: Տ. Ֆիշլըր որ Գերման Մասնախումբին կողմէ զրկուած էր մեր հայրենիքը, տիրուր լուրեր կը բերէ մեզ անկեց: Խաղաղութիւն եւ ապահովութիւն գոյութիւն չունին: Զարդը միշտ կայ ու կը մնայ: սա տարբերութեամբ որ 10000ը մէկէն չեն կոտորուիր, հապա՛ 10 հոս, 20 հոն, 100 ուրիշ տեղ: Ասանկ չնչին (°) գէպերով չզբաղիր լրացրութիւնը: Այնպէս որ կոտորածները կը շարունակուին սիսդէմաթիք կերպով, բայց աւելի ճարպիկութեամբ: Սրտածննդի բաներ տեսնու է Տ. Ֆիշլըր: «Մեր որբանոցն հասան խուճը մը դեռահաս աղջկանք որոնց գանկին մորթը գերծած էին կամաց կամաց: Աւրիշ որ մը կին մը ընդունեցինք որուն գաւակը կտոր կտոր ըրած էին աչքին առջեւ եւ յետոյ այդ կտորները մօր բերանը խորթած: Որբանոց ապաստանող կիներուն մօծ մասը բռնաբարուած էին: Մարդ չարարելու նոր եղանակ մը հնարուած է: Կողովի մէջ կը դնեն զայն մեղուններու ընկերակցութեամբ: մնացածը երեւակայեցէք: Թուրք սահմանադիրին վրայ ճամբորդած աստե՛ն սեւ բան մը տեսայ ծառէ մը կախուած: քահանայ մըն էր բոլորովին մորթադերձ: Կ'ըսեն թէ կոտորածները ցաւալի արկածներ են: հապա այն հեռագիրները դորս մէկ քանի փաշաներ բարեօրէնարար ցոյց տուին մեզ եւ որք ջարդեր կը հրամայէին, «արկածներ» են: Վերջերս լրագրիներ ըսին թէ հայերը կը հարստահարուին Պարսկաստանի մէջ եւս: Հա՛րկ է կրկնել թէ ոչ մէկ կառավարութիւն այնքան քրիստոնէաբար վարուեցաւ հայերուն հանդէպ որքան պարսիկ կառավարութիւնը...»

Ս. ԷՋՄԻԱՍՏԱՆԻ ԳԱՆՁԱՎԱՐՈՒՄԻ ԳՈՐԾԸ

Մեր վերջին թիւին մէջ Բիւզանդիոնի մէկ թղթակցութենէն քաղելով ծանուցինք Էջմիածնի գանձարանէն 200,000 ռուպլիի գողութեան մը խնդիրը: Պոլսական հայաթերթին արդէն յոյժ վերապահութեամբ կը ծանուցանէր այս ծանրակշիւ լուրը, զոր մենք ալ միեւնոյն հանգամանքով արտասուցեցինք: Բիւզանդիոնի վերջին թիւերէն՝ Կը հասկցուի որ տրուած լուրը կա՛մ չափազանցւած էր կա՛մ արդիւնք ձախող թիւրիմացութեան մը: Գործին անհիմն ու անստոյգ ըլլալուն առաջին նշանը սա է որ Պ. խորէն խորիման, գլխաւոր ամբաստան, եւլը սոյն գողութեան մէջ, որ ընդ հակողութեամբ թիֆլիս տարուած էր, ազատ արձակուեր է դատական իշխանութեան կողմէ: Իսկ Նահապետ ու վահան վարդապետները որոնք մեղաւորից կը համարուէին եւ որոնք տարբեր բաղաճներ զրկուեր էին իրեն աքսոր, թողաւորուեր են իրենց ուղած տեղը երթալու: Թիֆլիսի թերթերը, որոնք միայն կրնային մեծագոյն լոյսը սփռել այս խորհրդաւոր գործին վրայ, բացարձակ լուրթիւն կը պահեն, անշուշտ բարձրագոյն հրամանի մը

համակերպելով: Բայց ուշ կամ կանուխ բանը երեւան պիտի ելլայ անտարակոյս, նոյն իսկ ցրուելու համար անհիմն զոյգի մը թողած յուր տպաւորութիւնը եղնիկու համար Մայր Աթոռի հորիզոնին պոյժաւորութեանը վրայ պահ մը երեւցող այս մուծ բիծը:

ԱՂՔԱՏՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Անցիւանքը ծանուցինք թէ տեղւոյս թաղական խորհուրդը երեք անձերէ մարմին մը կազմեր է՝ աղքատներու պէտքերուն հագացման համար հանգանակութիւն կառուրիլու:

Հանգանակիչ մարմինը գործի ձեռնարկեր է, բայց «բարեկեցիկ դասակարգը» որուն գիմեր է աւելնէն առաջ, պաղ ընդունելութիւն ըրեր է: Մեր ընթերցողները կը յիշեն անշուշտ թէ այս «բարեկեցիկ դասակարգը» վառնոյի հայ ժողովրդեան ան մասն է որ Տաճիկ վերաւոր զինուորաց հանգանակութեան համար իր նըպաստը յօտարակամ երկեցուց ասկէց մինչեւ Պոլիս: Այս «աղնուսիան դասակարգ»ին համար հայուն արիւնը խմող թուրք զինուորին վերքը շատ աւելի գթութիւն հրաւիրող է քան հայ լըքուած մանուկին, անօթի մօրը ու թշուառ հօրը անհուն տառապանքը: Ասանկ անօրէն ընթացքի մը համար աշխարհի վրայ չըկայ ո'ւ է արդարացուցիչ պատուակ: Ամօ՛վ:

Սակայն մէկ քանի անողորմեւրու սառն ընթացքը վհատեցնելու չէ հանգանակիչ մարմինն անգամները, իրենց պարտքն է գիմել ամէն հայու, կացութեան ծանրութիւնը բացատրել եւ զգացը նել աղգային անմերժելի պարտականութիւնը: Անհաւատալի բան է որ քիչ շատ կարող հայ մը չըշտապէ իր նուէրը տալու:

ԿԻՊՐՈՍ

Վերջերս կարգ մը անգլիացիներու ձեռամբ կազմուեր է «Ընկերութիւն արեւելեան ու գաղթային» անուամբ առեւտրական ընկերութիւն մը որուն նպատակն է շահագործել Կիպրոս կղզին լեռնային հարստութիւնները: Դըրամազլուին է 50,000 անգլ. ոսկի: Այս լոկ առեւտրական նպատակով յօրինուած ընկերութեան մեղ շահագորգուող կողմը սա է որ տնօրէնութիւնը մտադիր է Կիպրոսի հայ գաղթականներուն բազուկէն ու ձեռնհասութենէն օգուտ քաղել իր ազարակներուն մշակման ու շերամաբուծակին եւ հիւսուածական գործողութիւններուն համար: Մտադիր է նաեւ մշակել տալ ընդարձակ գիտինները Ս. Մովսր վանքին, որ պիտի կրնայ ծաղկեալ կեդրոն մը

ԸՆԿԵՐՈՒՄԻՆ:

Հայ գաղթականութեան բարիքին տեսակէտով՝ անհնար է ասկէց աւելի բանիմաց ու գործնական եղանակ մը յղանալ խեղճութենէ ու կորստեան վտանգէ փրկելու համար հարիւրաւոր հայեր: Երանի թէ օտարներէ եկած բարեգործական նպաստներ փոխանակ նիւթական վաղանցիկ բաշխումներ ըլլալու, այս առաջացնող յարատեւ հանգամանքը ներկայացնէին միշտ:

ԱՆՔԱՆ ՏԵՂԵԿԱՎԻՐ

Որոմէնի Առաքելին Ռուի ֆոնտանգլիական ընկերութիւնը զոր կը կազմեն անգլիացի հայասէր տիկիններ, հրատարակեր է իր երկրորդ տեղեկագիրը: Ակնարկ մը կը նետէ այն գէպերուն վրայ որոնք արեւմե ռոզդեցին հայաբնակ գաւառները: Միմիայն վանի գաւառին մէջ ջարդուած հայերուն թիւը 10,000 կենթադրէ: Կը խօսի վանի որբանոցին հիմնարկութեան վրայ ուր աւելի քան 200 հայ որբեր կը խնամուին, ինչպէս նաեւ Թուրքիոյ հազարաւոր հայերու գաղթման վրայ ի Պարսկաստան եւ Ռուսիա, ինչ որ դիւրացաւ սոյն ընկերութեան հայթայթած դրամական միջոցներուն շնորհիւ: Անգլուհիներու հայապաշտպան այս մարմինն տեղեկագիրը իրաւամբ կսքանչանայ նուիրաւորներուն վրայ որոնք թէեւ փոքրաթիւ, բազմապատկած են իրենց նուիրատուութիւնները սփռելու պատմութեան մէջ նմանը չտեսնուած թշուառութիւններ: Զարմանք կը յայտնէ տեսնելով որ Անգլիոյ ժողովրդեան մեծամասնութիւնը այնքան քիչ կը հետաքրքրի հայկական խնդրին: Մինչեւ 1897 սեպտեմբեր 30, ընկերութիւնն հաւաքած է իւր 14,604 անգլ. ոսկի որ գրեթէ ամբողջովին յատկացուած է մեր թշուառ հայրենակիցներուն ամուրմանը:

Պատիւ անգլիացի մարդասէր տիկիններուն այս երկնահաճոյ գործունէութեանը:

«ԻՐԱՒՈՒՆՔ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Խմբագրութիւնն ողորդած է Ծուռլուէն զրկուած թեր ուղէմ գրութիւններով, բացի անոնցմէ զորս ասկէց առաջ հրատարակեցինք: Կը խնդրուի այս յօդուածագիրներէն որ ա՛լ վարդեն իրենց գրիչը, որովհետեւ խմբագրութիւնն այսուհետեւ փակուած կը նկատէ վիճարանութիւնը ի մասին Ծուռլուէ տեղացիներու լաւ կամ գէշ վարմունքին հանդէպ գաղթականաց եւ պարոցի ու եկեղեցիի անվերջ խնդիրներուն: Եթէ մինչեւ հիմակ ձեւարտութեան լոյսը չցայտեցաւ ցարդ կղած գրաւոր բանակութիւններէն, ասկէց ետքն ալ ցայտելիք չունի: Խմբագրութեանս այս վճռական պատասխանը թող ցատկատառէ պատ՝ յօդուածագիրներուն:

«ԻՐԱՒՈՒՆՔ»ԸՆԴՈՒՄԻ (1898)

Իրաւունքն իբրե՛ն սէնէսի խիթամ պուլուպ, Բունվար պիւրտէն իթիպարէն իշիւնճի սէնէյէ գատէմ պասըյօր. պու եէնի սէնէն պարֆընտա տախի միլլէթտաշլարըմըլըն հիւննի թէվէտճիւհընա մազհար օլմագ իւմիտինտէյիլ: Պինաէն ալէյհ իրաւունքն միւնտէրիճաթընը տահա զիյատէ ճալիպի տըգգաթ իտէպիլմէթ իշիւնճ էրմէնիճէ զըսմընտա հալա, տիւսաթը խարիճիյէ վէ թիւրքճէ զըսմընտա Պուլկարիա ըն տախիյի հալստիպէրի հալատիպէր Պուլկարիատա պուլընան միլլէթտաշլարըմըլըն հէր պընֆընաշայա, նը տըգգաթ վէ մուճիպի մէնֆաւաթ օլմագ տըր:

Կաղէթամըլըն թիւրքճէսի լիսանըն լէթաֆէթինէ պագմայուպ հէր պիւր օգույանըն անլայապիլէճէկի աշըգ պիւր լըսանլէ եազըլմագ տըր:

Իրաւունք միլլէթին հիշ պիւր ֆըգրասընա թարաֆտար օլմայալ, հէր պիւր մէսէլէի պիթարաւա ֆանէ մուհաթէմէ իտէճէք վէ միլլէթին մէնֆաւթընը կէօղէտէճէք տիւր:

Իրաւունքն սէնէլիք ապօնէ պէտէլի Պուլկարիա իշիւն 12 վէ խարիճ իշիւն 14 ֆրանգ թային օլընմըլ տըր: Կաղէթա հաֆթատա իքի տէֆա՛ թապ օլընտըրը կիւնճ բօսթայա վէրիլի: Եալընըլ Պուլկարիա խարիճիտէ պուլընանլարա իքի նօմէրօսը պիւր տէֆատան եօլլանըլըր: Փագաթ պուլնլարտան հէր քիմ արզու իտէր իսէ 2 ֆրանգ զիյատէ վէրուպ, կաղէթամըլը կիւնիւ կիւնիւնէ ալըր ալըր ալա պիւրիլ:

Իրաւունքն պէտէլին սէնէվի 2 ֆրանգ պամ իթմէմիզ հիշ պիւր քիմնէյէ միւստիտէթսիզ կէօրիւն: մէմէլի տիւր: զիւրա կէչէն սէնէ հաֆթատա իքի տէֆա նէշը իթմէյէ պաշլայաճաղըմըլ վագթթմ 100 ապօնէ արթմագ իսէ 2 ֆրանգ պամ իթմէկէ մէճպուր օլմագըլմըլը եալմըլ տըգ: Ապօնէլէրիմիզ արթմամըլ օլտըլը հալտէ պու սէնէ էսկի ֆիյաթլէ տէվամ իթտի իսէքտէ պու տէֆա կաղէթամըլըն թէրագգըսընը վէ պէգասընը թէմին իթմէք իշիւն 2 ֆրանգ պամ իթմէկէ մէճպուրիյէթ հասըլ օլմուշ տըր: Պունընլա պէրապէր իրաւունք խարիճտէ նէշը օլունան կաղէթալըն էն ուճուղը տըր:

Կէչէն սէնէ կաղէթա պէտէլինի էօտէմիշ օլան զէվաթա պու եէնի սէնէտէ տախի եօլլանըլմագ տըր: 1898 սէնէսի իշիւն իրաւունքա ապօնէ օլմագ իսթմէյէնլէր կաղէթայը կէրի եօլլամայը վէ եալսօտ պիւր մէթթուպալ պիւրիթմէլի տիւրլէր:

Հէ՛ր ԳԻՄ ԳԻ ԵԼՆԻ ՍԵՆԵՏԷ ԿԱԶԷԹԱՄԸԶԸՆ ԻԻԶ ՆՕՄԷՐՕՍԸԸ ԳԱՊՈՒԼ ԻՏԷՐ ՎԷԿԷՐԻ ԵՕԼԼԱՄԱԶ ԻՍԷ՛ԱՊՕՆԷ ԹԱՆԸԼԱՃԱԳ ՏԸՐ:

Իրաւունք մուստիպիլի

Печатница. „Взаимность“ — Варна